Յիշեայ զՀոգի Հանգուցելոյ
Ստեփաննոսի ծառայի Քոյ·
Թուին Ռ, Մ, Խ, Գ,»

Դարձեալ մի այլ տապանագիր

«Թաղեալ կայ այս գերեզման
Երիտասարդ մի պատուական
Ոմն Գրիգոր յոյժ սիրական
Տէրն արասցէ զսա արժան
Ընճառ երկնից արքայութեան
Թուին· Ռ· Մ· Ծ·»

Օրինակած էի քանի հին յիշատակարաններ որք կորստեան են մատնուած։

Կոյս Խանում·—Կոյս Խանումի գերեզմանը յիշատակարան չունի, կոշտ քար մի անգամ վերան չկայ· սակայն նորա կեանքն և նահատակութիւնը նկարուած է իւր սեռի սրտին մէջ, պատկառանօք և հառաչանօք կը յիշեն նորա անունը։

Կոյս Խանումի կենսագրութիւնից հաղիւ մատնաւոր ինչ միտս պահած եմ կորուսած գրութիւններէս։

—Խամուրայ վիճակն Կոյս Խանումի միջոցին ամբողջովին հայ կը լինի, նորա մայրը մահմետականութիւնը կընդունի, Խանում խոյս կտայ, այս այն տեղ որպէս զի մօրը բռնութեան տակ չընկնի, մայրը խուզարկուներ կը հանէ բէկերու ձեռքով, կը գտնեն, ջրէն անցնելու միջոցին Խանում ինք զինք Արածանին կը ձգէ, Արածանին կիսախեղդ Մանազկերտի աջ ափերն դուրս կը ձգէ, կապաւինի Անդափ· մայրը գտնել տալով